Այս մտածութիւններն ինձ այն աստիճան զբաղեցրել էին, որ ես ամենեւին չէի նկատել, թէ արեւը վաղուց մայր էր մտել եւ ձորի մէջ մութը բաւականին թանձրացել էր, իսկ Սօնան հագնուած, դուրս էր եկել քարանձաւից:

Երբ ես մօտենում էի նրան, իմ գլխում պտտւում էին խիստ քաղցր ցանկութիւններ. ես յոյս ունէի, թէ Սօնան ինձ կգրկէ, կհամբուրէ, կյայտնէ իր կարօտութիւնը ինձ երկար ժամանակ չտեսնելու համար, եւ շատ գեղեցիկ խօսքեր կասէ: Բայց դրանցից եւ ոչ մէկը չեղաւ:

— Ֆարհատ, — ասաց նա խիստ սառն կերպով, — որոնի՛ ր մի ծածուկ տեղ, ուր մեզ չտեսնեն, ես մի քանի խօսքեր ունեմ քեզ ասելու:

Մենք բարձրացանք դէպի մերձակայ բլուրի զռիւերը, որ պատած էր վայրենի նշենիներով, եւ նստեցինք մի սեպացած ժայռի մօտ: Այնտեղից գիշերային մթութեան մէջ տեսնւում էր ուխտաւորների բանակը, որ լուսաւորուած էր գոյնզգոյն լապտերներով, որ բռնել էր ընդարձակ տարածութիւն վանքի չօրէք կողմում, եւ մինչեւ այնտեղ լսելի էին լինում զանազան նոագածութեանց ձայներ: Բայց Սօնային ոչինչ չէր գրաւում. տխո՛ւր էր նա, մահուան պէս տխո՛ւր էր նա: Խեղճ աղջիկ, ես երբեք նրան ուրախ չէի տեսել...

Սօնայի առաջին խօսքերը բոլորովին ընտանեկան էին, վերաբերում էին իր վիճակին: Նա ասաց, թէ զրկուելով մօրից, իր միակ մխիթարութիւնն էր Ստեփանը՝ իր սիրելի եղբայրը: Եւ չնայելով, որ Ստեփանը վերջին ժամանակներում բաւականին ուղղուել էր, այսոամենայնիւ նրա հայրը, Ստեփանի խելագարութիւնը տիրամօր պատիժ համարելով, բերեց նրան եւ վանքի «խեղճերի» մէջ գցեց: Նա պատմում էր, թէ ինքը շատ աղաչեց հօրը, որ այս անգթութիւնը չանէ, Ստեփանին թողնէ տանը, թէ ինքը խոստանում է միշտ խնամել, պահպանել նրան, — բայց հնարք չեղաւ, հայրը չընդունեց: Այս պատճառով Սօնան ստիպուեցաւ աստուածածին ուխտ գալ, որովհետեւ չէր ուզում շուտով բաժանուել իր եղբօրից: Եւ այժմ ամէն օր աղաչում է, պաղատում է հօրը, որ Ստեփանին «խեղճերի» մէջ չթողնէ, որ նրան վանքից ետ առնէ եւ կրկին տուն տանէ եւ այլն:

Այս բոլորը նա պատմեց խիստ ցաւալի եւ դառն եղանակով, բայց առանց մի կաթիլ արտասուքի: Խե՜ղճ աղջիկ, այնքան անբախտ էր, որ լացել եւս չէր կարող...

Այնուհետեւ նա ինձանից երդում առեց եւ սկսեց պատմել մի գաղտնիք:

Նա ասաց, թէ որսորդ Աւօյի եւ նրա հիւրերի, այսինքն՝ Կարօյի եւ նրա ընկերների դէմ սարքւում է մի մեծ դաւադրութիւն: Պատմեց, թէ իր հօր մօտ